ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/301-2022 գրությամբ «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.12.2021թ. թիվ ԱՍ/35.1-Ղ4-2/4578-2021 գրության հիման վրա, 10.01.2022թ. թիվ 26/26-1/301-2022 գրությամբ նախաձեռնել է «Մադոյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մադոյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մադոյան» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/09 ընթացակարգի շրջանակներում քննության նպատակով 17.01.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.12.2021թ. թիվ ԱՍ/35.1-Ղ4-2/4578-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ի (այսուհետ՝ Հանձնաժողով) և «Մադոյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև Հանձնաժողովի կարիքների համարշենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը խախտել է պայմանագրի էական պայմանները և պայմանագիրը մասնակի միակողմանի լուծվել է:

Վերը նշվածով պայմանավորված՝ ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/09 ընթացակարգի շրջանակներում քննության նպատակով 17.01.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և «Մադոյան» ՍՊԸ-ի միջև 25.02.2021թ. կնքվել է «ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ» ծածկագրով պետության

կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/»-ի մատուցումներն իրականացվում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի:

4. «Մադոյան» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2021թ. թիվ ԱՍ/35.1-Ղ4-2/4527-2021 ծանուցմամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և «Մադոյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև Հանձնաժողովի կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 հավելվածի՝ Կատարողը պետք է սահմանված ժամկետներում կատարի ստանձնած պարտավորությունները:

Հանձնաժողովը հոկտեմբեր ամսին դիմել է Կատարողին տանիքային օդորակիչ սարքի սպասարկման աշխատանքների իրականացման համար, սակայն Կատարողը չի իրականացրել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 29-ից մասնակի՝ 612113 (վեց հարյուր տասներկու հազար հարյուր

տասներեք) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է 2021 փետրվարի 25-ին կնքված ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Մադոյան» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 567-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի և Պայմանագրի 5-րդ կետի պահանջները»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու՝ Տեղեկագիր) 29.12.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/301-2022 գրությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.12.2021թ. թիվ ԱՍ/35.1-Ղ4-2/4578-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպես, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և «Մադոյան» ՍՊԸ-ի միջև 25.02.2021թ. կնքվել է «ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ» ծածկագրով պետության կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը

կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/»-ի մատուցումներն իրականացվում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման ցուցակը ներկայացված է հետևյալ ձևով՝

ՑՈՒՑԱԿ		
	Ծառայության անվանումը	Գինը
	Տանիքային կենտրոնական օդորակիչների վրա կատարվող աշխատանքներ	
1	Ծխահեռացման օդամղիչի ապամոնտաժում, մաքրում, տեղադրում	16421
2	Հեռակառավարման վահանակի փոխարինում	17331
3	Օդամղիչների փոխանցման թոկերի փոխարինում	10590
4	Ծխահեռացման օդամղիչի նորոգում	23754
5	Էլեկտրական Պլատայի նորոգում	30400
6	Օդամղիչների շարժիչների փոխարինում	54530
7	Ջերմային ապահովիչ անջատիչների փոխարինում	16359
8	Կանխարգելիչ աշխատանքներ	12153
9	Սարքի ընդհանուր արտաքին զննում՝ ֆրեոնային կոնտուրում յուղի հետքերի հայտնաբերման նպատակով /ֆրեոնի արտահոսքի հետ կապված/	7760
10	Սառեցման ջերմափոխանակիչի քիմիական լվացում	19975
11	Արտահոսքի վերացում, ֆրեոնի լիցքավորում	35479
12	60000բտու/ժամ կոմպրեսորի և նրա փոխարինման աշխատանքներ	278987

13	Էլեկտրական թողարկիչ և նրա փոխարինում	85366
14	Օդային ֆիլտրի մաքրում	3791
15	Էլ. կոնդենսատորի փոխարինում	11002
16	Գազայրիչների մաքրում	12153
17	Գազի հոսքի էլեկտրոկարգավորվող փականի փոխարինում	28086
18	Գազի հոսքի էլեկտրոկարգավորվող փականի նորոգում	12153
19	Հեռակառավարման վահանակի նորոգում	6128
20	Սնուցման բլոկի տրանսֆորմատորի փոխարինում	19175
21	Օդամղիչների շարժիչների նորոգում	20139
	Սպլիտ համակարգի վրա կատարվող աշխատանքներ	
22	24000btu/h օդորակիչի կոմպերսորի փոխարինում ներառյալ կոմպրեսորը	89576
23	12000btu/h օդորակիչի կոմպերսորի փոխարինում ներառյալ կոմպրեսորը	73051
24	24000btu/h օդորակիչի ֆրոնի լիցքավորում	17681
25	12000btu/h օդորակիչի ֆրոնի լիցքավորում	14252
26	24000btu/h օդորակիչի ռեվերսի կլապանի փոխարինում ներառյալ ռեվերսի կլապանը	21655
27	12000btu/h օդորակիչի ռեվերսի կլապանի փոխարինում ներառյալ ռեվերսի կլապանը	19554
28	Էլեկտրոկոնդենսատորի փոխարինում	11002
29	Ներքին բլոկիկի պլատայի նորոգում	15045
30	Ներքին բլոկիկի պլատայի փոխարինում	30864
31	Ներքին բլոկիկի օդամուղի շարժիչի փոխարինում	27782
32	Արտաքին բլոկիկի օդամուղի շարժիչի նորոգում	16835
33	Ներքին բլոկիկի լվացում քիմիական նյութերով	14370

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն 22.12.2021թ. պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 2 արձանագրության՝ արձանագրվել է, որ Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ 22.12.2021թ. դուրս գրված N Ա2985993876 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

- ***«Ներքին բլոկի լվացում քիմական նյութերով,***
- ***օդային ֆիլտրի մաքրում,***
- ***կանխարգելիչ աշխատանքներ,***
- ***հեռակառավարման վահանակի նորոգում,***
- ***էլեկտրական պլատայի նորոգում,***
- ***ջերմային ապահովիչ անջատիչների փոխարինում,***
- ***էլեկտրական թողարկիչ և նրա փոխարինում,***
- ***օդամղիչների շարժիչների փոխարինում:***

28.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 2 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Հարկային հաշվում և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման ***արձանագրության մեջ նշված աշխատանքներից կատարվել են միայն «Օդային ֆիլտրի մաքրում» և «Հեռակառավարման վահանակի նորոգում» աշխատանքները***, որոնց համար փոխանցում իրականացնելը հնարավոր կլինի առանձին հարկային հաշիվ ներկայացնելու դեպքում:

<u>Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ բացասական եզրակացություն»:</u>

Այնուհետև՝ 29.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 3 եզրակացությունը, որի համաձայն՝ ***«Օդային ֆիլտրի մաքրում» և «Հեռակառավարման վահանակի նորոգում» աշխատանքների իրականացման մասով տրվել է <u>դրական եզրակացություն</u>:***

Միևնույն ժամանակ 29.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 2 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

- ***կանխարգելիչ աշխատանքներ,***
- ***էլեկտրական պլատայի նորոգում,***
- ***ներքին բլոկի լվացում քիմիական նյութերով,***
- ***ջերմային ապահովիչ անջատիչների փոխարինում,***
- ***էլեկտրական թողարկիչ և նրա փոխարինում,***
- ***օդամղիչների շարժիչների փոխարինում:***

«Վերոնշյալ աշխատանքները կատարված չեն, համաձայն որի կիրառվելու է պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

<u>Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ բացասական եզրակացություն»:</u>

«Մադոյան» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2021թ. թիվ ԱՍ/35.1-Ղ4-2/4527-2021 ծանուցմամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և «Մադոյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև Հանձնաժողովի կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 հավելվածի՝ Կատարողը պետք է սահմանված ժամկետներում կատարի ստանձնած պարտավորությունները:

Հանձնաժողովը հոկտեմբեր ամսին դիմել է Կատարողին տանիքային օդորակիչ սարքի սպասարկման աշխատանքների իրականացման համար, սակայն Կատարողը չի իրականացրել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 29-ից մասնակի՝ 612113 (վեց հարյուր տասներկու հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է 2021 փետրվարի 25-ին կնքված ՀԾԿՀ-21/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Մադոյան» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 567-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի և Պայմանագրի 5-րդ կետի պահանջները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 29.12.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ***«Ցուցակ»-ի համաձայն՝ «Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցումը բաղկացած է 33 «անվանում ունեցող» ծառայություններից,*** որոնց մատուցումները՝ համաձայն նույն հավելվածի, ***իրականացվում են ըստ պատվիրատուի պահանջի*** /մինչև 2021թվականի դեկտեմբերի 20-ը/, մինչդեռ արձանագրում եմ, որ գործում առկա նյութերում բացակայում է

Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից ըստ պահանջի Ընկերությանը ներկայացված ծառայությունների ցանկը, որի պայմաններում միայն հնարավոր կլիներ քննության առնել և արձանագրել Ընկերության կողմից ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացված ծառայությունների Պայմանագրով սահմանված ժամկետում չկատարման փաստը և որպես հետևանք այդ մասով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հիմքի իրավաչափության հարցը:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը նման պայմաններում չի կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/301-2022 գրությամբ «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**